ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀՐԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թվականի հունվարի 23-ին Արմավիրի մարզի Առատաշեն գյուղական համայնքի ղեկավարի կիսամյակային հաշվետվությանը ներկա էին մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ՝ Արսեն Ղուկասյանը, համայնքի ավագանու անդամներ, դպրոցի, մանկապարտեզի, համայնքապետարանի աշխատակիցներ և համայնքի թվով 56 բնակիչներ:

ՀՀ Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ղեկավարը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

1. Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

2017թ. երկրորդ կիսամյակի ընթացքում համայնքապետարան է դիմել 51 բնակիչ : Դիմումներում բարձրացվել են սոցիալական, հողային, շինարարության, ֆինանսական և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել լուծումներ: Ընթացիկ ժամանակահատվածում համայնքաապետարանում ստացվել է 144 գրություն, հղվել է 153պաշտոնական գրություն, համայնքի բնակիչներին տրվել է 241տեղեկանք: Համայնքապետարանը համայնքի բնակիչների շահերը պաշտպանելու նպատակով, իր միջնորդությամբ հանդես է եկել անձնագրային բաժնում, նոտարական գրասենյակում և կադաստրի տարածքային ստորաբաժնմունքում:

Համայնքում երկրորդ կիսամյակի ընթացքում կայացել է ավագանու 7 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր և կայացվել է ավագանու 30 որոշումներ, որոնք ներկայացվել

են մարզպետարան: Համայնքի ղեկավարի կողմից կայացվել է տարբեր բնույթի 24որոշում և 12 կարգադրություն, որոնք նույնպես ներկայացվել են մարզպետարան: Համայնքապետարանը ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության:

2. Ֆինանսների բնագավառում

Տնօրինել է համայնքի 2017 թ. բյուջեի մուտքերը և նպատակային օգտագործումը:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

1.	Հողի հարկ	8388.8 հազ. դրամ
2.	Գույքահարկ	4779.8 հազ. դրամ
3.	Գույքի վարձ. վճար	570.0հազ. դրամ
4.	Դոտացիա	23386.3 հազ.դրամ
5.	Տեղական տուրքեր	157.5 հազ.դրամ
6.	Հողի վարձակալության գումար	144.6 հազ. դրամ
7.	Տեղական վճար	1047.5հազ.դրամ
8.	Հողի իրացումից մուտքեր	61.6հազ. դրամ

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

1.Տեղական ինքնակառավարում	14689.5հազ. դրամ
2.Կրթություն և մշակույթ	3623.2 հազ. դրամ
3. Սոց. օգնություն	4300.0հազ. դրամ
4. Երիտասարդական ծրագրեր	1218.8հազ. դրամ
5. Նախադպրեցական ուսուցում	9848.0հազ. դրամ
6. Հանգստի և սպորտի ծառայություն	30.7հազ. դրամ
7.Ընդհանուր բնույթի ծառայություն	687.1,0հազ.դրամ
8 Արտաքին լուսավորություն	296.8հազ. դրամ

9.Բնակարանային շինարարություն 1000,0 հազ. դրամ

10. Աղբահանում 1530.0հազ.դրամ

11.Գյուղատնտեսություն 400.2հազ. դրամ

12.Առողջապահություն 364.8 հազ. դրամ

13.Ընդհանուր բնույթի հանրային ծառայութ. 174.1հազ. դրամ

14. Ջրամատակարարում 1856.0 հազ. դրամ

Գյուղապետարանը աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի և եկամտային հարկի գծով հաշվետու ժամանակաշրջանում ոչ մի պարտք չունի:

3. Պաշտպանության բնագավառում

Գյուղապետարանը տարածքային զինկոմիսարիատից ստացած ծանուցագրերը ժամանակին հասցնում է հասցեատիրոջը և հետևում է ,որ ժամանակին ներկայանան զինկոմիսարիատ:

Հատուկ ուշադրություն է դարձվում պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը: Երիտասարդության շրջանում մեծ աշխատանքներ են տարվում ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու գործում:

4. Քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ընդերքի օգտագործման վրա:

Անընդհատ աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով հարկերի հավաքագրման ուղղությամբ: Համայնքում մասնագետների մասնակցությամբ տրվել է անվճար խորհրդատվություն բույսերի պաշտպանության հարցում:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ:

5. Կոմունալ տնտեսություն և բարեկարգման բնագավառում

Երկրորդ կիսամյակում համայնքում կազմակերպվել է աղբաթափման աշխատանքները ,այն կատարվում է շաբաթը մեկ անգամ,որի համար հատկացվել է 1530,0 հազ. դրամ: Համայնքում խմելու ջրի ջրագիծը շատ հին է և հաճախակի վերանորոգման կարիք է ունենում,որի վրա ծախսվել է 1856.0,0հազ.դրամ: Երկրորդ կիսամյակում կատարվել է համայնքի փողոցների լուսավորության համակարգի վերանորոգման աշխատանքներ, որի նպատակով ծախսվել է 296.8 հազ.դրամ:

Գյուղապետարանը մշտապես աջակցում է էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատարկարարման, գազամատակարարման ծառայությունները իրականացնող աշխատակիցներին:

6. Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Գյուղապետարանը երկրորդ կիսամյակում համայնքի մանկապարտեզին հատկացրել է 9848,0 հազ.դրամ ծառայությունների գումար՝ աշխատավարձ , սնունդ և այլ ծախսեր կատարելու համար: Մշակույթի տանը գործում է պարի, ըմբշամարտի և նկարչական խմբակներ: Գյուղապետարանը աջակցում է նշված խմբակների ծառայությունները նորմալ կազմակերպելու համար, որի համար հատկացրել է 30.7 հազ. դրամ: 568.8հազ. դրամ հատկացվել է Ամանորի միջոցառնամ կազմակերպման և համայնքի երեխաների համար ամանորյա նվերներ ձեռք բերելու համար:

Մշակույթի տանը տեղավորված է նաև գրադարանը, որն ունի 7920 կտոր գրականություն:

7.Սոցիալական ծառայության բնագավառում

ՈՒշադրության կենտրոնում է սոցիալապես անապահով և զոհված ազատամարտիկների ընտանիքները, որոնց տրվում է ֆինանսական

օգնություն: Երկրորդ կիսամյակում համայնքապետարանը հատկացրել է 4300.0 հազ. դրամ: Գյուղապետարանը համայնքի հանգուցյալների համար պատվիրում է դիակառք և ծաղկեպսակ: Երկրորդ կիսամյակում այդ նպատակով գյուղապետարանը հատկացվել է 350.0,0 հազ, դրամ:

Համայնքում գործում է «Խնամակալության և հոգեբարձության» հանձնաժողով, որի հիմնական խնդիրն է անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումը:

Բուժ. ամբուլատորիան կահավորված է ժամանակակից սարքավորումներով, համայնքի բնակչության բուժ. սպասարկումը գտնվում է բարձր մակարդակի վրա: Համայնքապետարանը ապահովում է էլեկրա և գազամատակարամամբ, որի համար հատկացրել է 364.8 հազ. դրամ:

9. Գյուղատնտեսության բնագավառում

Համայնքն ունի զարգացած գյուղատնտեսություն, ապահովվում է անասնաբուժական ծառայություններ՝ իրականացնում է անասնահամաճարակային միջոցառումներ, որի համար հատկացվել է 224.3 հազ. դրամ:

Համայնքում կազմակերպվում է անասունների և թռչունների հակահամաճարակային պատվաստումներ:

Հիմնախնդիրներ

Առատաշեն գյուղի հիմնական հիմնախնդիրներն են՝

1. *Խմելու ջրի ջրագծի վերանորոգման հարցը::*
2. *Ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման հարցը:*
3. *Մանկապարտեզի շենքի վերանորոգման հարցը:*

Համայնքի ղեկավար՝ *Վ.Հարությունյան*

23 հունվարի 2018թ.
Գ.Առափաշեն